


520-9-1



ՆՈՐԱՅԱՍՆԵՐՈՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՍ


◆ Խմբագիր ◆
ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

◆ ՏԵՐ ԷԼՏԵՐԻՆԻ ◆
Մ. ՍՈՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 9

15 ԱՊՐԷԼ 1920

ԳԻՆ 100 ՓՐ.



Նկարիչ

ՓԱՆՈՍ ԲԵՐԼԵՍԷԶԵԱՆ

ԿՈՊԵՌՆԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1900 ԻՆ

Կեդրոն Պահնե Գաբու: Մէյվախօշ Խան—Հեռաձայն Սթամպուլ 319

Տղոց հագուստի վաճառատուն

ՄԻՂՐԱՆ ՄՈՍՃԵԱՆ

Եւրոպական ծեւով նաշակաւոր, դիմաց-
կուն եւ ածան հագուստ ունենալու հա-
մար տղա՛ս, ծնողքդ առաջնորդէ Մեծ
Շուկայ, Իսկէնտէր Պօղազըի դրան ուղ-
ղութեան վրայ, Ֆէրաճէճիլէր փողոց,
թիւ 1:

Տղոց մորթային հիւանդութեանց
դարմանատուն

ՏԲԹ. Թ. Յ. ՄՁՐԿԵԱՆ ԵՆ
ՏԲԹ. Թ. Գ. ԿՈՍՏԱՆԴ

Մեծ շուկայ, Գալբազըլար, Պայազիտի
դրան դէմ, թիւ 18:

Փ Ա Ս Տ Ա Բ Ա Ն

ՇԷՔԷՐԵԱՆ

Չարմաքըլար, Սեպուհեան խան, թ. 40

ՏԲԹ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Մ Ա Ս Ն Ա Գ Է Տ

Ներքին եւ մորթային հիւանդութեանց
Պայազիտ, Մաքասըլար, թիւ 5

ԾՆՈՂՔ ՄԻ ՔԱՇԵԼ ՏԱՐ

Ծնողքներ պէտք չէ քաշել տար
ձեր փոքրիկներուն ակռաները, այդ կեր-
պով կզակի ծեւափոխութիւն յառաջ
կուգայ: Դիմեցէք Ատամնաբոյժ

ՏՈՒԹ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԷՔՄԷՔՃԵԱՆԻ

որ արտասահմանի մէջ երկար ժամա-
նակ, մասնաւորապէս զբաղած է նաեւ
տղոց կաթի ակռաներու դարմանումի
ուսումնասիրութեամբ եւ ատով մասնա-
գիտութիւն ծեռք բերած:

Հասցէ՝ Պոլիս, Էմին Էօնիւ, Եէնի ձամիի
սանդուխներուն դէմ, թիւ 61:

ԱՐԴՈՒԶԱՐԴԻ ԵՒ
ՆՈՐԱԶԵԻՈՒԹԵԱՆՑ

Վ.Ա.ՃԱՌԱՏՈՒՆ

ՍԱՀԱԿ ՍՎԱՃԵԱՆ

Մեծ Շուկայ ՔԱԼՓԱՔՃԻՆԵՐՈՒ
ՃԱՏՏԷՆ ՔԻՒՐՔՃԻՆԵՐՈՒ ԴՐԱՆ
ՃԻՇՏ ԴԻՄԱՅ ԹԻԻ 2

ԲԺՇԿԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

ՏԲԹ. ԵԴ. ՄՈՒՐԱՏԵԱՆ ԵՆ

ՏԲԹ. Կ. ՔԷՐԷՍՏԷՃԵԱՆ

Ներքին եւ մորթային հիւանդութեանց
Պոլիս, նոր նամակատան կից Նիւզիէթ
Ջիա դեղարանին վերնայարկը:

Ամեն Հայ պէտք է ունենայ

ՄԲՈՂԶԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ք Ա Ր Տ Է Ս Ը

ԳՈՒՆԱԼՈՐ, մեծադիր, մանրամասն
ԴԻՆ 30 ՂՐՇ:

Դիմել Պապը Ալի ճատտէսի, Ասա-
տուրեան տպարան, Յ. Դարբինեանի

ԱԶՔԸ ԼՈՅՍ

Իրենց առողջութեան

նախանձախնդիր անձերուն

ՏԲԹ. ՄԱՐՏԻԿ Յ. ՐԷԻՍԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ի դիւրութիւն իր յարգոյ յաճախորդնե-
րուն եւ համակիրներուն փոխադրուած է
Պոլիս, նոր նամակատան դէմ, Վլօրա
խան, թիւ 18, ուր գիտական ամենա-
վերջին նորութեամբ կը դարմանէ բերնի
եւ ակռաներու հիւանդութիւններ. կը
շինէ երաշխաւորեալ տոկունութեամբ եւ
նրբաճաշակ ատամնաշարեր, գուրօններ,
պոլիչներ եւ բիվօներ:


ԿԱՏԱՐԵԱՆ ՃՇԴԱՊԱՀՈՒԹԻԻՆ
ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻԻՆ



ՆՈՐԱՀԱՍՆԵՐՈՒ ՊԱՏԿ. ՀԱՆԴԵՍ

Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Խմբագիր
ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ



ՏԵՐ ԵՆ ՏՏՈՐԷՆ
Մ. ՍՈՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ — ԹԻԻ 9

15 ԱՊՐԻԼ 1920

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԷՆ ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ

Փոքրիկ բարեկամներս,

Աշխարհի վրայ գրեթէ բոլոր կրօնքներ կը սորվեցնեն թէ մարդ հոգի մը ունի, որ անմահ է: Կրօնքները իրենց բարեշրջութեան աստիճանական բարձրացումին մէջ նուազ կամ աւելի լոյսով մը երեւան կը բերեն այս մեծ ճշմարտութիւնը, որ ամենամեծ յոյսն ու կարօտն է մարդկային հոգիին: Այո՛, մարդ հոգի մը ունի, որ անմահ է: Մարդս կը սոսկայ մահուան գաղափարէն և բոլոր հոգիովը կ'ըմբոստանայ անոր դէմ:

Եւ ահա, սիրելի փոքրիկներ, այդ իրողութեան հաստատութեան և պանծացումին մէկ տարեղարձն է Յարութեան տօնը, զոր ամէն տարի կը տօնէ Քրիստոնեայ աշխարհը: Զատիկի առթիւ երբ իրար կը շնորհաւորէին ձեր ծնողքը և մեծերը՝ իրարու կ'ըսէին. — «Քրիստոս յարեալի մեռելոց», «Օրհնեալ է Յարութիւն Քրիստոսի»: Այո՛, Քրիստոսի Յարութեան աւետիսը մեզի համար ուրախառիթ է, որովհետեւ մենք եւս յարութիւն պիտի առնենք, և հետեւաբար մեր հոգիներուն համար մահ չկայ. ուրեմն հիմակուրնէ սորվելու էք այնպիսի կեանք մը ապրիլ, որ տ'լ աւելի սիրելի ըլլայ ձեզ յարութեան յոյսը:

Այս առթիւ ձեզի պիտի տամ յարութեան քանի մը օրինակներ: Նախ՝ դիտեցէք Բնութեան յարութիւնը: Գարնան եղանակն է. ձմեռուան այն լերկ ու ախուր դաշտերը դալար ու ծաղկեայ պատմութեան մը հագած են: Ծառերը ծաղիկներով ու տերեւներով ծածկուած են: Դաշտերու և անտառներու լուսթիւնը թռչուններու ճուղղիւններով խան-

գարուած է : Բնութեան մէջ շարժում մը , կենսունակութիւն մը կը նշմարուի : Ամէն տեղ կեանք , ամէն տեղ գործունէութիւն կայ : Բնութիւնը , որ ձմրան եղանակին մեռելային անշարժութեան տխուր պատկեր մը կը ցուցադրէր , հիմա արթնցած է , յարութիւն առած է : Այս կեանքն ու կենսունակութիւնը դիտող ամէն մարդ կը հրճուի՝ իր ալ հոգիին մէջ , սիրտին խորը , մէկ անդրադարձումը տեսնելով այս հոգեգրաւ սպտկերին : Ի՞նչ թելադրիչ , ի՞նչ զմայլարար է Բնութեան յարութիւնը :

Կայ նաեւ ուրիշ աւելի փառաւոր , աւելի մխիթարար յարութիւն մը , որ է Սիրսին յարութիւնը : Թերեւս քիչ մը պիտի զարմանաք այս բացատրութեան մասին : Սիրտը կը մեռնի՝ որ նորէն ողջնայ , յարութիւն առնէ : Բայց այո , փոքրիկ բարեկամներ , երբեմն կը պատահի որ մարդուս սիրտը կը մեռնի , դժբախտաբար : Անմիջապէս ձեզ ըսեմ թէ ի՞նչ հասկցնել կ'ուզեմ սիրտին մահուան ականարկելով : Երբեմն մարդերու , և ինչո՞ւ չըսեմ , մինչեւ իսկ ձեզ նման դեռատիներու սիրտը չար զգացումներով ու հոգին չար փափաքներով այնչափ կը համակուի որ գրեթէ բարի բաներու ու փափաքներու հանդէպ մեռած կ'ըլլայ , ինչ որ բարոյական մահ մըն է : Երբեմն չէ՞ք տեսած այնպիսի անուղղայ , ցաւալիօրէն չար ու բարոյապէս ինկած ընկերներ , որոնց սիրտը մեռած է ազնիւ ու բարի բաղձանքներու , կարօտներու և գաղափարականներու համար : Բայց օր մը այդպիսի անհատ մը , պատահնի մը կրնայ ինքն իրենը գալ , զգալ իր բարոյական անկումը , արթննալ իր հոգեկան մահացուցիչ թմրութենէն : Ահա այս ալ յարութիւն մըն է բարոյական աշխարհին մէջ , աւելի հրաշալի քան Բնութեան յարութիւնը : Այսպիսի հրաշալի յարութեան մէկ օրինակը այնչափ պարզ ու սրտագրաւ կերպով ներկայացուած է Աւետարանին մէջ , Անառակ Որդիի առակով , զոր կը յուսամ թէ եկեղեցիին մէջ լսեցիք Անառակի Կիրակիին առթիւ :

Սակայն յարութեան ամենափառաւոր օրինակին , Յիսուսի Յարութեան պատմական իրողութեամբ պանծացուած օրինակին մասին արդէն քիչ մը վերը ականարկած ըլլալով , հոս երկու խօսքով միայն յիշեմ Հոգիին յարութիւնը : Ըսի թէ Յիսուսի Յարութիւնը գրաւական մըն է մեր ալ հոգիներուն յարութեան : Ի՞նչ յուսադրիչ ճշմարտութիւն մըն է այս : Մենք պիտի ապրինք նաև հանդերձեալ աշխարհին մէջ , հոգեկան կեանքով մը , որուն համար մահ չկայ : Ուրեմն մեզմէ մահուամբ բաժնուող մեր սիրելիները չեն մեռած , այլ կը շարունակեն ապրիլ աւելի բարձր կեանքով մը :

Հետեւաբար , դեռատի բարեկամներս , Յարութեան տօնին այս ներշնչումներով խանդավառուած տպաւորեցէ՞ք ձեր մատաղ միտքերուն մէջ թէ , մենք անմահ էակներ ենք , մեր հոգին չի մեռնիր , ան պիտի ապրի հանդերձեալ աշխարհին մէջ : Ուրեմն , պէտք է որ միշտ մաքուր եւ ազնիւ կեանք մը ապրինք : Պէտք է անմահներուն պէս ապրինք այս մահկանացու աշխարհին մէջ :

ՓԱՌԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Փա՛ռք Յարուբեան,
Մի՛շ, յաւիտեան
Թող խանդավառ
Երգէ աշխարհ:

Զի Տէր Յիսուս,
Մե՛ր կեանքն ու յոյս,
Յաղթեց մահուան
Մի՛շ, յաւիտեան:

Մահը չունի
Ա՛յ սոսկումի

Փուշն ու խայթոց՝
Տալու մեզ խոց:

Մեր Փրկչին հե՛տ
Երանաւէս
Պիտի ապրինք,
Զի ողջ է Ինք:

Երգէ աշխարհ
Բերկրապատար,
Փա՛ռք Յարուբեան
Մի՛շ, յաւիտեան:

ԳՐ. Հ. Գ.



ԼԵՌՆԵՐՈՒՆ

Ապրիլի գաղջ արեւին տակ,
Դէ՛հ, ժպեցեք, ձիւնո՛ւ լեռներ,
Մարմարան իր ծոցը յսակ
Կը ցոլացնէ ձեր ջինջ պատկեր:

Կղզիները հոս ձեզի դեմ՝
Հալփն, Փրոքին, Փրքինփփօն,
Կարծես նախանձ մ'ունին դժխեմ,
Զեզ կը դիտեն երբ մըրայօն:

Մարմարան իսկ ձեր ոտքերուն
Տակ կը քննի ալեակներով,
Մինչ կը դիտէ լանջն իր փրփրուն,
Նայուածով մը գոհ, անխրոով:

Խորո՛խս լեռներ, սիրած Նեմ ձեզ.
Դուք նոգիիս քրոնչ կուտաք,

Ես բարձրանալ կ'ըղձամ ձեզ պէս,
Ծոցն երկինքին ջինջ, կապուտակ:

Դուք մեծութեան ու վեհութեան
Օրինակն եք ինծի համար,
Երբ կը բազմիք հող անսասան՝
Զիւնապրտակ ձեր սեզ կատար:

Գարշուրիւններն այդ աշխարհին,
Ինծի գգուանք մը կ'ազդեն խոր,
Զար կիրքեր երբոր կ'ունին՝
Ա՛հ, կը սոսկամ սիրով բոլոր:

Ապրիլի գաղջ արեւին տակ՝
Դէ՛հ ժպեցեք, ձիւնո՛ւ լեռներ,
Դասն այս վրտեմ, զոր ինձ կուտաք,
Ես չեմ մոռնար, չեմ անգոսներ:
ԳՐ. Հ. Գ.

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ԲԱԺԻՆԸ

ԲԱՐԵՍԻՐՏ ՊԵՐՃՈՒՅԻՆ



Պերճուհի, համեստ կօշկակարի մը աղջիկը, դպրոցին մէջ ամէնուն սիրելին դարձած էր։ Իր հեզ ու բարի բնաւորութեամբ շահած էր իր բոլոր ընկերներուն համակրանքը, իր աշխատասիրութեամբն ալ միշտ իր ուսուցիչներուն գովեստին կ'արժանանար։ Այս փոքրիկ բայց բարեսիրտ աղջիկը ամենէն աւելի հոգածութիւն և օգնութիւն ցոյց կուտար իրմէ տկար ու աղքատ եղողներուն։

Շարաթ օր մը, աշակերտները արձակելու ատեն, վարժուհին քսաւ անոնց թէ որոշուած է որ յաջորդ օրը, կիրակի առաւօտուն բոլորը մէկ պտոյտի երթան, ուստի պատուիրեց որ ամէն աղջիկ իր ճաշը միասին բերէ, վասնզի պտոյտը մինչեւ իրիկուն պիտի տեւէր։ Այս ուրախ լուրին վրայ փոքրիկ աշակերտուհիները անմիջապէս տուն վազեցին և սկսան իրենց վաղուան պտոյտի պատրաստութիւնները տեսնել։

Յաջորդ առաւօտ, մէկիկ մէկիկ հաւաքուեցան դպրոցին պարտէզը, մեծ մասը գեղեցիկ ու մաքուր հագուստներ հագած էին և իրենց ձեռքը գտնուած սակաւները բազմատեսակ ուտելիքներով ու պտուղներով լեցուն էին։

Քիչ վերջ, վարժուհին ալ գալով, սկսաւ ներկաներուն անունները զրել, տեսնելու համար թէ ամենքն ալ եկած էին։ Բոլորը արձանագրելէ ետքը յայտնի

եղաւ որ միայն Վերգինէ անուն աղջիկը բացակայ էր։ Քիչ մըն ալ սպասեցին, որպէսզի ան ալ գար և ամբողջ խումբը ճամբայ ելլէր։ Ճիշդ նոյն միջոցին հեռուէն տեսնուեցաւ Վերգինէին դալը, ու ընկերները սկսան պոռալ. «Վերգինէն կուգայ, կուգայ կոր»։ Տրտում տխուր երեւոյթով մը կը յառաջանար խեղճը աղջիկը դէպի պարտէզ և իր աչքերը արցունքոտ էին։ Վերգինէ դպրոցին մէջ ամենէն աղքատն էր։ Մայրը չէր կրցած իր աղջկան ուտելիք մը տալ, պտոյտի մէջ ուտելու համար։ յայտնի էր թէ շատ լացած էր ան։ Ան կուգար առանց սուկառի։ Պարտէզ մտած ատեն Վերգինէ երբ տեսաւ իր ընկերներուն հագած գեղեցիկ զգեստները և անոնց ձեռքերնին բռնած լեցուն սակաւները, չափազանց տխրեցաւ և վերսկսաւ լալ։

Պերճուհի հեռուէն նկատած ըլլալով աղքատ աղջկան ցաւալի վիճակը, անոր քով վազեց, քիչ մը մխիթարելու նպատակով։

Բայց նոյն միջոցին վարժուհին կանչեց Վերգինէն։

— Ո՛ւր էիր, Վերգինէ, հարցուց վարժուհին, ո՛ւր է սակաւդ, ճաշդ չի բերի՞ր։

— Օրի՛որդ, պատասխանեց աղջիկը խիստ յուզուած ձայնով մը, ես պիտի չկրնամ պտոյտի երթալ։

— Ինչո՞ւ։

Իսկոյն արցունքները սկսան թափիլ դժբախտ աղջկան այտերէն վար և կակազեց։

— ...Ու... ուտելիք չբերի։

Պերճուհի, որ ճիշդ Վերգինէ

էին քովը կեցած էր, հասկցած
էր անոր լալուն և վիշտին պատ-
ճառը: Իր զգայուն փափուկ սիր-
տը չափազանց վիրաւորուեցաւ,
տեսնելով որ իր ընկերներէն մէ-
կը, ուտելիք չունենալուն համար
զուրկ պիտի մնար պտոյտի զբո-
սանքներէն:

— Ներողութիւն, օրիորդ, ը-
ստա Պերճուհի առաջ անցնելով,
ինչո՞ւ վերգինէ հոռ պիտի մնայ.
մենք բոլորս կը փափաքինք որ
ան ալ մեզի ընկերանայ: Ես ար-
դէն ինծի համար պզտիկ սակաւ-
մը բերած եմ, մէջը բաւականա-
չափ կերակուր ունիմ և պատ-
րաստ եմ կէսը սիրով վերգինէին
տալու, որպէսզի ան ալ պտոյտի
զայ և մեզի հետ միասին զուար-
ճանայ:

Տարակոյս չկայ թէ Պերճու-
հին այս բարեսիրութիւնը որչափ
վերգինէին մխիթարութիւն, նոյն-
չափ ալ իրեն երջանկութիւն
պատճառած է:

* Բարիք ընելը կրկնապէս օրհ-
նուած է. թէ ընողը թէ ալ ըն-
դունողը կ'երջանկացնէ:

ԿԱՐՊԻՍ Ս. ՄՕՐՈՒՔԵԱՆ

ԱՌԱԿԱՆԻ

ԱՌԱԿ-ՔԱՌԵԱԿՆԵՐ



Բաւական է մեղր ունենաս,
ձանճերն իսկոյն կը հասնին.
Էհ, շահասէր աշխարհ է այս,
Մարդիկ գիտեն շահերնին:



Յո մը գործին հարցուցին,
— Ինչո՞ւ միշտ կը կռկրուաս:

— Զմայլած եմ իմ ձայնին:
Սակաւադէպ բան չէ այս:



Գարնան տաք կանանչին
Հոգեվարքն է անպատեհաւ.
Անժամանակ բաներուն
Արդիւնքներն են յանախ չար:



Գէշը ունի եօթը շապիկ,
Կը հագցընէ մէկը քեզ.
Պէտք է ըլլաս արթուն հարպիկ,
Որ ինքզինքդ պաշտպանես:



Գառնուկին հետ պառկէ,
Արտուսին հետ արթնցիր.
Գործերուդ մէջ, իրա՛ւ է,
Կ'ըլլաս յաջող, զըւարթ, ժիր:



Գեղեղ մարդ չիկայ,
Ի՛նչ ուզես՝ խօսէ.
Պարծենկոտ մարդուն
Միշտ այսպէս քսէ:



Գէշին աղջիկը սու,
Գէշին աղջիկ մի՛ տար.
Վա՛յ այն աղջիկին,
Որ է գէշին կին:



Գեղը նստէ է,
Քաղաք կը պոռայ.
Մարդ իր վիճակէն
Պէտք է գոհ ըլլայ:



Գարին հոս կ'ուսեն,
Հաւկիթն հոն կ'ածեն.
Ցաւն ու հոգը մեզ,
Փառքն ու վարձքը ձեզ:



Երբոր տունէն ըլլայ գողը,
Ծակէն անգամ կ'ելլէ կովը.
Ներսէն ուսող ցաւին համար
Յանախ դարման չիկայ յարմար:

ԱՌԱԿԱԽԹՍ

ԳԻՏԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ՕՐՈՐՈՑԸ ԿԱՄ ՁՈՒՆ

Թ.

Գէշ աննդառութեան գէշ հետեւանքը խորշերու վրայ.— Ունակութիւնը խորշերու մէջ.— Ապառողջապահիկ ուտելը պատճառ ապագայ դժուարութիւններու.— Ծխախոտի վատ ազդեցութիւնը խորշերու վրայ.— Ալքոլը ու անոր սոսկալի ազդեցութիւնը խորշերու վրայ.— Ալքոլամոլին տխուր վախճանը:

Եւ ի՞նչ կ'ըլլայ արդիւնքը: Խորշերը կը մերժեն շարունակել իրենց գործը, կը ծուլանան, կը գրգռուին և անունդը չմարսուած դուրս կուգայ ստամոքսէն: Հետեւաբար արիւնը կ'աղքատանայ ու խորշերը իրենց պէտք ունեցած ուժը չեն կրնար ստանալ արիւնէն: Խորշերէն ոմանք անսուադութենէ կը մեռնին, իսկ ուրիշներ թէեւ կը գործեն՝ բայց իրենց պատրաստած հիւսուածքները տրկար կ'ըլլան ու աննպատակալարմար: Ուրիշներ խեղճուկ նիւթերով կը շինեն այնպիսի հիւսուածքներ, որոնք անբնական ըլլալով մաքմինին մեաս կը հասցնեն: Բոլոր խորշերը այս կերպով դժգոհ ու հիւանդ կ'ըլլան և կը թոյլատրեն ախտածին մանրէներու գալ զետեղուիլ իրենց մէջ: Ուղեղի խորշերը անբաւական սրնանումի պատճառաւ ջղայնութիւն ու գլխացաւ կը պատճառեն: Մորթի խորշերը աղէկ մորթ պատրաստելու տեղ, լերկ ու վիրաւոր մորթ մը կը պատրաստեն՝ երբ լաւ մորթը իյնայ:

Ահա այս կերպով ամէն բան խանգարած կ'ըլլայ ու այս վիճակին ենթական անմարսութեան հիւանդութեամբ տառապող մը կը նկատուի բժիշկէն: Ենթական կը կարծէ թէ անմարսողութեան ախտը ստամոքսի ախտ մըն է պարզապէս, մինչդեռ իրականին մէջ մարմնի բոլոր խորշերուն անսուադութիւնն է: Խորշերն ալ մարդոց պէս ունակութիւններ կը շինեն: Երբ ստամոքսի խորշերը մարսելու իրենց պարտականութեան մէջ թերանան՝ այդ ունակութիւն մը կը դառնայ իրենց: Այսպէս պատանի մը կրնայ անհոգ և ապառողջապահիկ ուտելու սովորութենէն շատ չտառապիլ սկիզբները, բայց այդպիսին մեծ դժուարութիւններ կը պատրաստէ ապագայ տարիներուն համար:

Ծխախոտի գործածութիւնը տարօրինակ ազդեցութիւն մը կ'ընէ մարմնին խորշերուն վրայ: Ջղային խորշերն են որ կը զգան զայն նախ: Ծխախոտը երբ առաջին անգամ գործածուի, խորշերը կը ջանան անոր հակազդել. ստամոքսի խորշերը փսխումի միջոցաւ կը յայտնեն իրենց դժգոհութիւնը, բայց ատեն մը ետքը խորշերը կը վատասերին և ծխախոտին չափազանց գործածութեամբ կը թմրին ու կարծես նոյն իսկ կը յօժարին որ ծխախոտին թոյնը թունաւորէ զիրենք:

Ծխախոտը խորշերէն ոմանց համար շատ վրգուիչ, իսկ ուրիշներու համար մահացուցիչ է: Խորշերը այդ կերպով առողջ հոգաթաղանթներ չեն կրնար պատ-

րաստել : Մխախտող , մանաւանդ
չափազանց գործածութեամբ , յա-
ռաջ կը բերէ ճաշակելիքի և հո-
տոտելիքի խանդարումներ , գոնէ
բթացում :

Մարմինին խորշերը իրարու
հանդէպ ալ համակիր են : Մինչ
պատշաճ գործածութեամբ լաւ կը
գործեն , չարաչար գործածութեան
դէմ ալ կը միաբանին ու քանի
մը խորշերու դէմ եղած մեղան-
չումը կրնայ աղղել բոլոր մարմի-
նին : Չարաչար գործածութեան
ամենասոսկալին է ալքոլի գոր-
ծածութեամբ հասցումը ֆեմուր :
Ալքոլը նախ եւ առաջ կարգ-
մը խորշերը գրգռելով հաճոյք մը
կը պատճառէ , բայց չափազան-
ցութեամբ՝ հաճոյքը կ'անցնի և
խորշերը կը յոգնին ու կ'ընկ-
նան : Գերազգրգուածութիւնը ան-
բնականոն գործունէութիւն մը
յառաջ կը բերէ : Ինչպէս ծխա-
խոտով գրգռուած խորշերը՝ նոյն-
պէս ալ ալքոլով թունաւորուած-
ները կը փափաքին այդ թունա-
ւորմամբ մոռնալ իրենց անհան-
գստութիւնը , մինչեւ այն աստի-
ճան որ զոհին խորշերը դանդա-
ղօրէն կը վատասերին եւ ոչ մէկ
գործ կ'ընեն շիտակ ու կանոնա-
ւոր : Ստամոքսի խորշերը գործել
կը մերժեն , սնունդը յարմարա-
պէս չմարսուիր , ու ատեն մը
ետքը ստամոքսին ներքնակողմի
թաղանթը վէրքերով կը ծածկուի :
Մաղձ պատրաստելու պաշտօն
ունեցող խորշերը ճարպ կը պատ-
րաստեն : Վերջապէս խորշերը
բնականոն գործելու և առողջ
հիւսուածքներ պատրաստելու
տեղ , ալքոլալից արիւնին օգնու-

թեամբ անբնականոն կը գործեն
ու անյարմար հիւսուածքներ կը
պատրաստեն : Ենթական , վերջա-
պէս կը մեռնի այնպիսի դէշ ախ-
տով մը , որուն հետ իր ալքոլա-
մոլութիւնը արտաքնապէս յարա-
բերութիւն մը չունենալ կը թուի ,
բայց իրականին մէջ ան է չարի-
քին բուն աղբիւրը :

ՄԱՐԿՐԻԹ ՌԻՈՐԵՆՏ ՄՈՐԼԻ

(Վերջին մասը յաջորդով)

Պ Ա Տ Ճ Ա Ռ Ը

Այ՛ օւնիմք երկու,
Բայց մէկ հաս լեզու,
Պատճառը գիտե՞ս:
— Դուն տես ամեն բան,
Մի՛ խօսիր սակայն.
Պատճառն ըսի՛ր քեզ:

Ականչներ՝ երկու,
Բայց մէկ հաս լեզու,
Պատճառը գիտե՞ս:
— Լքս ամեն բան,
Մի՛ խօսիր սակայն,
Պատճառն ա՛յս է, տես:

Անգլ.է

ԳՐ. Լ. Գ.

ԲԱՆԱԼԻՆԵՐԸ

Սիրտեր զերդ դուռ բացուիլ կրնան
Բանալիով միսկ շաւ պզտիկ.
Երկուքն ըսեմ, տուի՛ր սակայն.
— «Շնորհակալ եմ» եւ «Կը հանի՞մ»:

Անգլ.է

ԳՐ. Լ. Գ.



ԶԱՐՀՈՒՐԱՆՔԸ ԿԱՐՆՈՅ ՄԷՋ

Քրեց՝ ժ02է Բ. Լ.

Թարգմանեց Հ. ՅՈՎՍԷՓ ՏԵՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆ
Վիեննական Մխիթարեան

Թուրքերէն փնտռուած, քա-
ղաքներէ հետապնդուած, երբեմն
հրացանի կը դիմէին, և իրենց
փրկութիւնը պարտական էին լե-
րան անցքերուն լաւ տեղեակ
ըլլալուն:

Զանարեան էֆ. որոշեալ ժա-
մանակին հասաւ: Մեծ դժուա-
րութեամբ անցած էր ռուսական
շարքերէն: Սակայն սպայ մը,
որ տեղեակ էր իր պատմութեան,
գլխով առաջնորդած էր զինքը
ժամադրութեան վայրը:

Սըտքը չափուշ ուշադրու-
թեամբ և յամբօրէն համբեց 300
ոսկին, և երբ վերջացուց, իշխա-
նական ձեւով մը Պարոյրը ինք
ձեռքով յանձնեց իր հօրը:

— Ահաւասիկ զաւակդ, Զա-
նարեան էֆ., մենք զինքը ա-
ռոյգ լեռնցի մը դարձուցինք:
Ծնորհակալ եղի՛ր անոր, ինչու որ
անոր շնորհիւ է, որ ազատեցաք
երկուքդ ալ:

Պարոյր այդ պահուն դառնա-
լով Սըտքը չափուշի, ըսաւ.

— Է՛յ, Սըտքը չափուշ, Ռու-
սաստան չե՞ս գար մեզի հետ:

— Իրաւ, Ռուսերը աւելի լաւ
պետեր են, քան Թուրքերը, և չա-
փազանց գոհ պիտի ըլլայի, եթէ
իմ հաղարապետս տեսնէի: Մեր
երկիրը տակաւին տէր չունի, կո-
ղտպուտի առեն է, պէտք է ա-

ռիթէն օգտուիլ: Կողոպտելու
համար շատ մը փոստաներ կան...
Մնաք բարով, Պարոյր էֆ., Ալ-
լահ և Ալի պահապանդ թող ըլ-
լան...:

Եւ երբ Զանարեան էֆ. իր
տղուն և ռուս սպային հետ կը
հեռանար, ուրախացած այս տե-
սակ տարօրինակ մարդ մը տեսած
ըլլալուն համար, Սըտքի չափուշ,
զանոնք կանչեց պոռալով.

— Զանարեան էֆ., քեզ կը
շնորհեմ երեք եզն ու երեք ուղ-
տի բեռները...:

ԺԱ.

Մինչեւ Կարնոյ գրաւումը,
Պարոյր և իր հայրը մնացին Պա-
թում, իրենց հօրեղբօր քովը: Ա-
նոնք երջանիկ պիտի ըլլային եթէ
մտահոգութիւն չունենային, որ
զիրենք կը տառապեցնէր, խոր-
հելով իրենց պարագաներուն վրայ,
զորս թողած էին Կարին, Թուրք
աւազակներու ձեռքը...:

Կարնոյ հայ փախստականները
պատմելով չէին կրնար սպառել
սրտաճմլիկ պատմութիւնները, և
այն վայրագ տանջանքները, զորս
Թուրքերը կը հնարէին Հայ ազգը
մարտիրոսացնելու և բնաջնջելու
համար:

Հազիւ թէ Ռուսերը Կարին
մտան, Զանարեան էֆ. և Պարոյր

ձիւ ապա տ ճամբաներուն վրայէն
դէպի կարին սկսան յառաջանալ :
Փալան-Տէօքէնէ անցած միջոցին
Պարոյրին ձին անդունդի մը մէջ
գլորեցաւ : Սակայն տղան իր ճար-
պիկութեամբ ինքզինք փրկեց . . . :
Չանարեան զինքը իր ձիուն գա-
ւակը առաւ :

Անուշաւան այս վիճակին մէջ
երկուքին դալը տանիքին վրայէն
տեսաւ :

Անոնք ա՛յնչափ իրարու ըսե-
լիք բաներ ունէին որ երեք օր
անդադար պատմեցին արցունք-
ներու մէջ, իրարու համբոյրներ
փոխանակելով :

ԺԲ .

Փոքրիկ աղջիկը կրցաւ գրտ-
նել իր եղբայրն ու քոյրը :

Իայց իր խեղճ մա՞յրը :

Թո՛ղ իմ փոքրիկ ընթերցող-
ներս մտահոգ չըլլան :

Անուշաւանին մայրը լոկ վի-
րաւորուած էր Թայֆուր պէյի
տունէն մեկնած միջոցին, կոշտ
գերման զինուորի մը կողմէ :

Փօն Կրիպառ որ բժշկութենէ
կը հասկնար, զինքը իր տանը մէջ
խնամել տուաւ, իբր պատանդ
պահելու նպատակաւ, և կամ թէ
Պոլսոյ գերիներու հրապարակին
վրայ ծախելու և մեծկակ գումար
մը շահելու դիտաւորութեամբ :

Ի՞նչու երբ սակայն անոր այս
նպատակը ի դերեւ հանեցին : Երբ
քաղաքը յարձակմամբ առին,
Փօն Կրիպառ սպաննեցին և դե-
ռատի կինն ալ ազատեցին : Անու-
շաւանին մայրը երկար ատեն
տեղւոյն ոռոսական հիւանդանո-
ցին մէջ մնաց :

Օրին մէկը վերջապէս ոռոս
սպայ մը եկաւ և իրեն կարնոյ
քաղքին առման լուրը տուաւ :

— Ես ձեր քաղքին համար
պաշտօնով զրկուած եմ, ըսաւ
անոր, արդեօք ինծի յանձնելու
նամակ մը չունի՞ք . . .

— Ափսո՛ս . . . պարոն . . . ո՞վ
գիտէ թէ իմիներս ի՞նչ եղան,
ամուսինս և զաւակներս . . .

— Չե՞ս ճանչնար մէկը, որ
քեզի տեղեկութիւն տար : . .

— Նայէ՛, ահաւասիկ քանի
մը տողեր . . . ասիկա Մատաթեան
էֆէնտիին տար, եթէ զինքը կա-
րենաս գտնել . . . թերեւս ան ալ
չկրցաւ ազատիլ :

Այս բանը սակայն գեղեցիկ
օր մը եղաւ, այնպէս որ Մատաթե-
ան էֆ . . , իր բարեկամին՝ Չանարե-
ան էֆ .ի կը վազէր, ձեռքը ճեր-
մակ պահարան մը ճօճեցնելով :

— Ուրախացէ՛ք . . . ուրախա-
ցէ՛ք, զաւակներս, մայրիկնիդ
ձեզի նամակ գրած է, անիկա
ողջ է և Վանի մէջ կը գտնուի . . .
չուտով դացէք զինքը փնտռեցէք :

Այսպէսով մեր բոլոր բարե-
կամները զիրար գտան ամենա-
տխուր արկածներէ վերջ : Անկէ
ետք խաղաղ և երջանիկ կեանք
մը անցուցին ձորական բէթիմին
տակ . . . :

Գալով Թայֆուր պէյի, իր
չարութիւնն ալ իր արժանի պա-
տիժը գտաւ :

Կ. Պոլիս գալուն, դաւաճա-
նութիւններուն հետեւանքով իր
բոլոր վարկը կորսնցուց էնվէր
փաշայի քով . . . դաւաճանութեան
մը մասնակից եղած ըլլալու ամ-
բաստանութեամբ, նախկին բա-
րեկամներու կողմէ մահուան դա-
տապարտուեցաւ . . . որոնք զինքը
Վոսփոր նետել տուին :

NINTH ENGLISH LESSON

V E R B S

Be (ըլլալ) բային խոնարհումը

I am — ալ էմ — եմ
 You are — ես ես — ես
 He is — հի իզ — է
 We are — ուի ար — ենք
 You are — ես ար — ք
 They are — թհէյ ար — են

I was — ալ ուազ — էի
 You were — ես ուըր — էիր
 He was — հի ուազ — էր
 We were — ուի ուըր — էինք
 You were — ես ուըր — էիր
 They were — թհէյ ուըր — էին

I have been — եղած եմ
 You » » — եղած ես
 He has » — եղած է
 We have » — եղած ենք
 You » » — եղած ք
 They » » — եղած են

I shall be — պիտի ըլլամ
 You will » — պիտի ըլլաս
 He » » — պիտի ըլլայ
 We shall » — պիտի ըլլանք
 You will » — պիտի ըլլաք
 They » » — պիտի ըլլան

Be thou = եղիր

Let us be = ըլլանք

EXERCISE

They are useful men. I was a boy, but you were a tall man. You have been very good to my father and she has been very useful to my sister. You will be my teacher and I shall be your pupil. You were here and I was there, Where are they now? They must be at

the school. Let us be content and then we shall be happy. It is very warm here. The girl is hungry. Our house is not cold. She has been very sweet to her mother. Our brothers are glad but theirs will be sad. These are wide and those are narrow. Ours are heavy, yours are light.

Down falls the pleasant rain,
 To water thirsty flowers;
 Then shines the sun again
 To cheer this earth of ours.

If it were always rain,
 The flowers would be drowned;
 If it were always sun,
 No flowers would be found.

Թիւ 14 բառեղծուածին լուծումը

ա Յ ծ
 Ժ Ի ր
 ո Յ տ
 ա ն կ Ո ղ ի ն
 Ե ր ո Ի ա ն դ
 վ ա թ Ս ու ն
 ա ղ Գ ա տ
 ա Բ ի
 ս Ի ն
 ո Ս ալ
 ո Տ ք
 ք ր Ու տ
 ու թ Ս ու ն

ՅԻՅՈՒՍ ԲՐԻՍՏՈՍ

Թիւ 15 բառեղծուածին լուծումն է ՁԱ-
 ՏԻԿ, Թիւ 16ին՝ ՎԱՐԴԱՆ, Թիւ 17 հանե-
 լուկին՝ ԱԴԱՄ, Թիւ 18ին՝ ԱԴ.

ԼՈՒԾԵՅԻՆ

Պէրպէրեան վրժ.էն (Սկիւտար).—
 Միհրան Ալիքսանեան, Աղեքսանդր Քի-
 րէճճեան, Կարօ Զրովեան՝ 14, 15, 16
 Թիւ բառեղծուածները եւ 18 Թիւ հա-
 նելուկը.

Ս. Մեսրոպեան վրժ.էն (ԿէտիկՅՓա-
 շա).— Գ. Գրիգորեան, Լուսինէ Կիւլ-
 պէնկեան, Օ. Պապիկեան, Գ. Պէրպէր-
 եան՝ 16 Թիւ բառեղծուածը Զ. եւ Մ.
 Խրիսթիանեան, Ս. Տէր Գրիգորեան՝ 14,
 15, 16ր, Ս. Նաւարեան, Ա. Էվրէնեան,
 Լ. Մեսրոպեան, Զ. Թօփաքեան, Ս. Գրի-
 գորեան, Յ. Պուրնաղեան, Պ. Մարգար-
 եան՝ 15, 16ր, Ն. Մէնէնտեան, Գ. Ար-
 թինեան, Զ. Սարաֆեան, Զ. Ժամկոչեան,
 Շ. Կիւմիւշկէրտան՝ 14, 15, 16, 18ր, Ս.
 Աւագեան, Դ. Տէր Նշանեան՝ 16, 18ր,
 Ն. Հոթօնեան, Թագուհի Իսրանեան,
 Նուարդ Պիւպիւլեան, Արաքսի Յակոբ-
 եան, Ա. Յովհաննէսեան, Արուսեակ
 Պէրպէրեան, Սիրարփի Կիւմիւշկէրտան,
 Ե. Տէմիրճեան՝ 15, 16, 18ր, Ալիս Բջիկ-
 եան, Կ. Երկանեան, Ն. Նշանեան՝ 15ր,
 Յ. Սամուէլեան 14ր, Իւղարեր Պասմա-
 ճեան՝ 15, 18ր, Ս. Թորոսեան 18ր, Ա-
 րաքսի Բամպուքճեան, Ժ. Սիմօնեան
 15, 16, Զ. Նազարէթեան, Ռօզէթ Յով-
 հաննէսեան՝ 14, 15, 16, 17, 18ր.

Թորոսեան վրժ.էն (Գատրգիւղ, Մօ-
 տա).— Շաքէ Թորոսեան՝ 14, 15, 16,

18ր, Վէրթա յմ Թօրամանեան՝ 14, 15,
 16, 17, 18ր. Գ. Փանոսեան՝ 15, 16, 17,
 18ր, Յ. Բագրճեան՝ 16, 17ր, Ն. Գրի-
 գորեան՝ 14, 17ր.

Օրթագիւղի աղջկանց որբանոցէն.—
 Էլմաս Մէնէնտեան, Սիրանուշ Ուզուն-
 եան, Նուարդ Ալիքսանեան, Շուշանիկ
 Մազեան՝ 14, 15ր, Արուսեակ Մազեան
 18ր.

Մայր վրժ.էն (Գումգարու).— Տի-
 րուհի Ապագաեան՝ 15ր, Նուարդ Գէորգ-
 եան, Տիրուհի Մէյմարեան, Անժէլ Գրի-
 գորեան, Հռիփսիմէ Զաֆրանճեան, Ա-
 րուսեակ եւ Անժէլ Քէշիշեան. Ֆիլօմէն
 Արապեան, Ս. Մէհտէրեան, Անահիտ
 Մէհտէրեան, Արաքսի Գօշունեան 14,
 15, 16ր.

Ս. Թաղէոսեան վրժ.էն (Բումէլի
 Հիսար).— Ս. Տիւսիգեան, Մ. Սարիմեան,
 Վահրամ Կարապետեան՝ 14ր, Լուսինէ
 Մազաքեան 18ր, Գ. Մազմանեան 15ր.
 Բօպէրթ Գօլէճէն (Ումէլի Հիսար).
 — Ճ. Գարեռուսուֆեան, Յ. Էքմէր-
 ճեան 14, 15, 16, 18ր, Ա. Տարրճեան,
 Բ. Ճէրաճեան, Յ. Քափուքճեան, Գ. Քա-
 րապաճեան՝ 14, 15, 16, 17, 18ր.

Լուծեցին նաեւ՝ Օ. Տէր Աբրահամ-
 եան, Զ. Մազմանեան, Բ. Ճրրճրեան,
 Ատրինէ Տատրեան, Մ. Պէզճեան, Աստ-
 ղիկ Ագնաւորեան, Շաքէ Թովմասեան
 14, 15, 16, 18ր, Պ. Զարոյեան, Օ. Քիւ-
 չիւքեան, Զ. Կիւմիւշեան, Քէսիքաշ-
 եան, Պ. Եղիազարեան, Նուարդ Գրի-
 գորեան, Ժ. Սազաեան, Սաթենիկ Փէշ-
 տիմալճեան, Ս. Պօյաճեան, Գ. Պօյա-
 ճեան, Յ. Մինթանճեան, Մ. Պճիկեան
 14, 15, 16, 17, 18ր, Մառի Գասապեան,
 Մ. Մելիքեան 15, 16, 18ր, Ս. Պէրպէր-
 եան 15, 16ր, Արմենուհի Շատուորեան
 14ր, Ալիս Գալուստեան 15, 16, 17, 18ր,
 Յ. Պօղոսեան, Յ. Զէօմէքճեան 15ր, Ն.
 Զէօմէքճեան 18ր, Մելիք Զիմէնեան
 10ր եւ անցեալ Թիւի թուարանականը,
 Վահէ Պարոնեան անցեալ Թիւի թուա-
 րանականը, Մառի Պարոնեան 15, 18ր,
 Նուարդ Իշխանեան, Պերճուհի Սուրեան,
 Արմենուհի Մէնէնտեան, Պերճուհի Ագ-
 նաւորեան 14, 15, 16, 18 Թիւ բառեղ-
 ծուածները.

ՎԻՃԱԿՈՎ ՇԱՀՈՂԸ

14, 15 եւ 16 բառեղծուածները, 17
 եւ 18 հանելուկները միանգամայն լու-
 ծող 17 անձերէն վիճակով առաջնու-
 թիւն շահեցաւ Միհրան Պճիկեան, որուն
 կը նուիրենք վեցամսեայ «ԱՌԱՆՈՒՄ» նո-
 րահասներու հանդէս. Պր. Մ. Պճիկեանէ
 կը խնդրուի հանցէն տեղեկագրել.

ՀԱՆԵԼՈՒԿԻ ԲԱԺԻՆ

ԲԱՌԵՂՇՈՒԱԾ

ԹԻԻ 19

0	.	.							
0	.	.							
0	.	.							
0	.	.	.						
0	.	.	.	.					
0	.	.	.	.	.				
0	.	.	.	.	.	.			
0	.	.	.	.	.	.	.		
0	.	.	.	.	.	.	.	.	0
	.	.	.	.	.	.	.	.	0
	.	.	.	.	.	.	.	.	0
	.	.	.	.	.	.	.	.	0
	.	.	.	.	.	.	.	.	0
0	.	.	.	.	.	.	.	.	0
0	.	.	.	.	.	.	.	.	
0	.	.	.	.	.	.	.	.	
0	.	.	.	.	.	.	.	.	
0	.	.	.	.	.	.	.	.	
0	.	.	.	.	.	.	.	.	
0	.	.	.	.	.	.	.	.	

1. Արմատիքի չափ մը :
2. Կանանց յատուկ մանեղու գործիք մը :
3. Բաղձանք նշանակող բառ մը :
4. Հատու գործիք մը :
5. Երկրպագութեան տեղ :
6. Շաբթուան օրերէն մէկը :
7. Մեծ փորձիչը :
8. Իսրայէլի տրուած հացը :
9. Հայ թագաւոր մը :
10. Մետաղ մը (հակառակ կողմէն) :
11. Հայ քաջերու մարտավայր մը :
12. Ամէն մարդու բաղձալի բանը :
13. Համեղ պտուղով վայրի անապատ թուփ մը :
14. Մանկիկին հոմանիշը :
15. Հոտաւէտ ծաղիկ մը :
16. Մեր նախածնողաց փորձավայրը :
17. Կայուն ջուր մը :

18. Որով մեր ազգը հարուստ է ներկայիս :
19. Ազգատոհմ կը նշանակէ :

Նշանակուած բառերը գտնել և չարելէ յետոյ զրօններուն համապատասխանող գրերով վերէն վար կարդալ Զատկական աւետիս մաղթանքը :

Պիլէճիկ Բ. Ա.

ԲԱՌԵՂՇՈՒԱԾ

ԹԻԻ 20

.	0	.							
.	.	.	0	.	.	.			
.	.	.	0	.	.	.			
.	.	.	0	.	.	.			
.	.	.	0	.	.	.			
.	.	.	0	.	.	.			
.	.	.	0	.	.	.			
.	.	.	0	.	.	.			
.	.	.	0	.	.	.			
.	.	.	0	.	.	.			
.	.	.	0	.	.	.			
.	.	.	0	.	.	.			
.	.	.	0	.	.	.			
.	.	.	0	.	.	.			
.	.	.	0	.	.	.			
.	.	.	0	.	.	.			
.	.	.	0	.	.	.			
.	.	.	0	.	.	.			
.	.	.	0	.	.	.			

1. Կրօնաւորի գաւազան մը :
2. Եւրոպայի հիւսիսային կողմը կղզեխումբի մը անունը :
3. Հայ թագաւոր մը :
4. Եկեղեցական անօթ մը :
5. Ասիոյ գլխաւոր կայսրութիւններէն մէկը :
6. Մեր սնունդին ստացած մէկ վիճակը :
7. Դոյն մը :
8. Քրիստոնեաներու նշանաւոր ուխտավայր մը :
9. Հայաստանի նշանաւոր մէկ գետը :
10. Յատուկ անուն մը որ համեւս կը նշանակէ :
11. Փայտ կտրելու գործիք մը :

Զրօններուն տեղ վերէն վար կարդալ հայ գրականութեան ռահ-վիրայ սուրբ մը :

ԲԱՌԵՂՇՈՒԱԾ

ԹԻԻ 21

Եռաժանկ բառ մըն եմ ես,
Թէ ի՞նչ եմ, տես, ըսեմ քեզ:
Վանկս առաջին է դերանոն,
Որ ոչ ես է և ոչ ալ դուն:

Իսկ վանկս երկրորդ ախորժաբեր
Իմաստ մ'ունի զոր չեմ ըսեր:
Երրորդ վանկըս հրամայական
Բայ մըն է շատ գործածական:
Իսկ ամբողջըս մէկ ածական,
Որ պէտք չէ քեզ ըսուի սակայն:
Օ՛ն ուրեմըն բարի ընկեր,
Կրկնապատկէ քուկին ջանքեր
Լուծելու այս բառեղծուած,
Պիտի կրնաս դուն անկասկած:

ԱՏՐԻՆԷ Ս. ՄԱՐՏԻԿԵԱՆ

(Ազգ. վրժ. Կէտիկ Փաշա)

ՀԱՆՆԵԼՈՒԿ

ԹԻԻ 22

Տասը ոտք երկուքը չի քալեր,
Տասը աչք երկուքը չի տեսներ,
Տասը ձեռք երկուքը չի բռներ,
Տասը ականջ երկուքը չի լսեր,
Հինգ քիթ մէկը հոտ չառներ,
Հինգ լեզու մէկը չի խօսիր:

Ի՞նչ է գիտցիր:

ՀԱՆՆԵԼՈՒԿ

ԹԻԻ 23

Միեւնոյն տեղն եմ ձմեռ թէ ամառ
Ըլլամ բացօդեայ կամ ներքե յարկի,
Ամառը պաղ եմ, անձիւն և անսառ,
Իսկ ձմեռը տաք և առանց կրակի:

ՎԱՀՐԱՄ ՄՈՄՃԵԱՆ

ԱՌԱՒՕՏ նորահասներու հանդէսի
Դրդ թիւի թուաբանական խնդիրին լուծումն է.

$$99 + \frac{9}{9} = 100$$

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՐՆԵՐ

Այն ջուրին յատակը որ չես
տես տեսներ՝ մի՛ յանդգնիր մէջը
մտնելու:

— Բարեկամութիւնը շատ ա-
ժան պիտի ըլլար՝ եթէ բարեւ-
տալով առնուէր:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Տիար Օննիկ Սինանեան 2 օ-
րինակ «Առաւօտ» նորահասներու
հանդէս կը նուիրէ Գալֆայեան
որբանոցին և 2 օրինակ ալ Գրւմ
Գարուի աղջկանց որբանոցին:

— Օր. Մառի Պարոնեան 1
օրինակ տարեկան «Առաւօտ» հան-
դէս կը նուիրէ Սկիւտարի պա-
տսպարանին:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Պ. Հայկ Խրիստիանեան, իրեն նը-
ւիրուած նորահասներու «Առաւօտ» հան-
դէսը կը նուիրէ Պէշիկթաշի որբանոցին:

— Յառաջիկայ թիւէն սկսեալ կար-
դացէք «ԱՔՍՈՐԱԿԱՆ ԱՂՋՆԱԿԸ» անուն
թերթօնը:

— Տղա՛ք, յանձնարարեցէք ձեր
մայրերուն որ գնեն իրենց համար «ՀԱՅ
ԿԻՆ» կիսամսեայ հանդէսը:

— Տղա՛ք, կ'արժէ որ գնէք «ՀԱՅ
ՍԿԱՌԻՏ» մարմնամարզական հանդէսը:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՔԹ. ՏԻԳՐ. ԵՂԻԿԵԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Յրիսան պէյ խան
թիւ 22

Գիտական խնամք եւ զեղարուեստական
ամենանուրբ ճաշակ, կատարեալ ճշդա-
պահութիւն եւ մաքրութիւն:

ՏՔ. ԱՐԹԻՆ ՊԷՅ ՏԵՎԼԵԹԵԱՆ

Նախկին վիրաբուժապետ Հայտար Փա-
շայի զին. հիւանդանոցին

Գիտական ամենավերջին մէթոտով, դե-
ղերով եւ ներարկումներով քիչ ժամա-
նակի մէջ առանց ցաւի կը բուժէ վէր-
քեր եւ ախտեր: Կը գտնուի ամէն օր
բացի Կիրակիէ, Գարաքէօյ, Ազլ. Փօս-
թին դեմաց Հին Վոյվօտայ թիւ 3

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ



**ՊՈԼԻՍ
ԵՒ ԳՎԻԱՌ**

Տարեկան (24 թիւ) 60 Դան.
Վեցամսեայ (12 ») 30 »

ԱՏԱՍԱՀՄԱՆ Տարեկան (24 ») 10 Ֆրանկ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.—Առաւօտի հասցէն է՝ Պապը Ալի
ճատտէսի, թիւ 43, Բ. Դրան ճիշդ դիմացը :

ՊԻԻՔԱՍԷԲԻՆ BUCCASEPTINE

Այս էլիքսիրը կը յանձնարարուի իբրեւ
ազդու հականեխիչ եւ դարման բերնի
բորբորումներու, ակռայի, ցաւերու, լին-
տերու հիւանդութիանց եւ բերնի գար-
շահոտութեան, ծայնի մարելուն, ամէն
տեսակ հարբուխներու, չոր հազերու,
ակռաները մաքրելու եւ ճերմկեցնելու :

ՔՐԷՄ ՍԱՐՔՕՓԹԻՍԻՏ CREME SARCOPTICIDE

Միակ դարման . բորոպութեան, որ
երեք օրէն կատարելապէս կը բուժէ
հին եւ նոր բորոպութիւնը :

Այս երկու դեղերուն, որոնց հայթայթիչը
եւ պատրաստողն է Վահան Պէրպէրեան,
կեդրոնատեղին կը գտնուի Պոլիս, Նուրը
Օոմանիէ ճատտէսի, Օամ. Կեդր. Դեղա-
րանը, թիւ 48 :

ՀԱՅԿ ՄԱՀՅԱԶԱՆԵԱՆ

ՄԱՔՍՍՅՈՒՆ ՅԱՆԶԵԱԿԱՏԱՐ

Ներածում եւ արտածում

Կը գնէ նաեւ «սթօք» տպրանքներ
Մահմուտ Փաշա, Բամանթօ խան, թիւ 23

ԿՕՇԻԿ ԳՆՈՂՆԵՐՈՒՆ

Պոլիս, Բարմար գարու, Մաքասնըլար,
թիւ 33 վաճառատան մէջ նոր ժամա-
նած ամերիկեան եւ անգլիական կօշիկ-
ներ սկսան վաճառուիլ, արանց 400,
կանանց 350 եւ տղայոց 300 դրուշէն,
ինչպէս նաեւ աժան լաստիկներ :
Կը շինուին նաեւ չափու վրայ կօշիկներ,
տոկուն եւ ձեւաւոր :

ՏԲԹ. ՆԵՐՍԷՍ ՍԱՆՏԱԼՃԵԱՆ

ՄԱՍՆԱԴԷՏ՝ աղանջի, քիթի եւ կոկորդի
հիւանդութեանց

Պահճէ Դարու, Համիտիէ, թիւրպէսի
դէմ : Աքիկ Իւթիւճեան դեղարանի վեր-
նայարկը :

ՏԲԹ. Ա. ՍԷՄԷՐՃԵԱՆ

Գումգարու, Պատրիարքարանի կարգը
Հիւանդ կ'ընդունի նաեւ ամէն օր ժամը
3էն 5, Քանթարճըլար, Էվրօքիտի դե-
ղարանը :

ԵՐԻՍԵՌ ՆԱԽԱՆԶԱԽՆԴԻՐՆԵՐ

Մարուր եւ ճաշակաւոր հագուստ ունե-
նալու համար պէտքէ անպայման դիմել
«Լատըվէզ» Ակադեմիայէն վկայեալ

Ս Լ Ա Մ Օ Տ ԴԵՐՁԱԿԱՏԱՆ

Հասցէ՝ Ղալաթիա, Վօյվօտա ճատ-
տէ, թիւ 122, անդլ. նմկան . մօտ :

ՀՈՎԱՆՈՑԱՆ

ՎԱՃԱՌ

ԵՐՈՒԱՆԴ

ԷՏԻԿԱՐԵԱՆ

Կը պատրաստէ
եւ կը նորոգէ,
ամէն տեսակ
հովանոցներ :
Կը ծախէ նաեւ
ընտիր եւ գե-



ղեցիկ գաւազաններ : Հասցէ՝ Եէնի ձամի,
Զիլինկիրլէր, թիւ 64 :

Բոլոր կարծր առարկաները մաք-
րելու եւ փայլեցնելու համար գործածէ

ՊԷՊԻՔՍ ԳԼԻՆՍՈՐ

հանրածանօթ ամերիկեան փոշին